ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 29 >> 11 2012թ. N: 312-Ա. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ ՍԱԹԵՆԻԿ ԲԵՅԲՈՒԹՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի <<թ>> ենթակետի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական ռեգիստրի 2012 թվականի նոյեմբերի 23-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Շիրակի մարզային հիվանդանոց>> փակ բաժնետիրական ընկերության և <<Գյումրու Գ.Գյուլբենկյանի անվան վիրաբուժական հիվանդանոց>> փակ բաժնետիրական ընկերության միաձուլման մասին>> տեղեկանքը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Շիրակի մարզային հիվանդանոց>> փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն Սաթենիկ Բեյբությանին 2012 թվականի նոյեմբերի 23-ից ազատել զբաղեցրած պաշտոնից՝ հաստիքի կրճատման կապակցությամբ:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լիպարիտ Մարտիրոսյանին և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Հովհաննես Հովհաննիսյանին՝ սահմանված կարգով կազմակերպել հանձնում-ընդունում:

Ա.ԳԻՋԻՐՅԱՆ

Իսկությունը հավաստում է՝